Պարույր Սևակ

Մանուշակը

Մանուշակը մի ժամանակ,
Ինչքա՜ն առաջ՝ ի՞նչ իմանաք,
Եղել է մի շա՜տ գեղեցիկ,
Մի շա՛տ քնքուշ,
Անո՛ւշ աղջիկ:
Բայց եղել է շատ բացքերան.
Սրա խոսքը տարել նրան,
Նրա խոսքը բերել սրան,
Ինչքան գաղտնիք են վստահել,
Ոչ մի գաղտնիք նա չի պահել:
Խրատել է մայրը նրան,
Իսկ նա՝ էլի միշտ բացքերան:
Խրատել է մայրը մեկ է՛լ,
Իսկ նա գլուխ չի էլ թեքել:
Մի՛շտ խելքի է մայրը գցել,
Իսկ նա լեզուն չի էլ կծել:
Երբ տեսել է՝ օգուտ չկա,
Անիծել է մայրն աղջկան.
«Դաշտերն ընկած՝
Ապրես ծնկած,
Հե՛նց զորանաս՝

Շո՛ւտ չորանաս,
Ու լեզուդ էլ
Բաց բերնիցը թող դուրս չգա,
Այլ բկիցը,
Ծոծրակիցը»:
Դրա համար
Մինչև հիմա
Մանուշակը ցողուն տալիս
Դեռ նոր ցցված՝
Կեռանում է
Դեռ նոր բացված՝
Թառամում է,
Իսկ ծաղիկն էլ դուրս է գալիս
Ոչ թե բերնից,
Այլ բկիցը
Եվ մինչևիսկ ծոծրակիցը...